# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 53 - 54 (16754) ՇԱԲԱԹ 6 ՀՈՒԼԻՍԻ 2019 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

## ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳԻ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՆՈՐ ԲԱՇԽՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ

*Հուլիսի 1-ին Թբիլիսիի «Շերաթոն Մետեխի պալաս» հյուրանոցում «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կառավարող կուսակցությունն անցկացրեց կուսակցության կողմից նախաձեռնած «Համամասնական ընտրություններ-2020» սահմանադրական նախաձեռնության շնորհանդեսը:*




Շնորհանդեսին «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության գլխավոր քարտուղար, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, կուսակցության գործադիր քարտուղար Իրակլի Ղարիբաշվիլին, Վրաստանի խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն, նախկին նախագահ Իրակլի Կոբախիձեն, խորհրդարանի առաջին փոխխոսնակ Թամար Չուգոշվիլին, շնորհանդեսին մասնակից ընդդիմադիր խորհրդարանական եւ ոչ խորհրդարանական կուսակցություններին, հասարակական եւ ոչ կառավարական կազմակերպություններին, դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներին մանրամասն տեղեկություններ հաղորդեցին սահմանադրական վերոնշյալ նախաձեռնության կիրարկման, դրա դրական եւ բացասական կողմերի մասին:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

## ՀՈՒԼԻՍԻ 5-Ը՝ ԵՐԿՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐԻ ՕՐ

*Երեկ, հուլիսի 5-ին Հայաստանը նշեց երկրի Սահմանադրության եւ պետական խորհրդանշանների օրը:*



1991 թվականին Հայաստանի Հանրապետության անկախության վերականգնմամբ անխուսափելի դարձավ նոր՝ ազգային սահմանադրության ընդունումը: Սահմանադրությունն ընդունվեց 1995թ. հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեով՝ հետագայում հանրաքվեներով (2005, 2015) ենթարկվելով փոփոխությունների: Սահմանադրության ընդունումից հետո, հուլիսի 5-ը դարձավ պետական տոն՝ Սահմանադրության օր:

2017թ. «Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» Հայաստանի օրենքում կատարված փոփոխությամբ ամրագրվեց նաեւ պետական խորհրդանշանների օրը: Պետական խորհրդանշաններն են՝ դրոշը, զինանշանը, օրհներգը՝ «Մեր հայրենիք»-ը: Այս օրն ավանդաբար անցկացվում են տոնական քայլերթ եւ մշակութային միջոցառումներ:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԻ ՀԵՏ

## ՌՈՒԲԵՆ ՍԱԴՈՅԱՆ. «ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԻՆՁ ԶԳՈՒՄ ԵՄ ԱՅՆՊԵՍ, ԻՆՉՊԵՍ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ»

*Վրաստանի լրատվական-վերլուծական «Sputnik» կայքի հետ հարցազրույցում Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը պատմեց Թբիլիսիում իր կյանքի, սիրելի վայրերի ու «Միմինոյի» ժամանակների քաղցր վերհուշերի մասին:*

*Վրաստանում Հայաստանի դեսպանի պաշտոնում Ռուբեն Սադոյանը նշանակվել է 2017 թվականի հոկտեմբերի 31-ին: 54 տարեկան է: Ամուսնացած է, երկու զավակի հայր: Վրաստանում դեսպան նշանակվելուց առաջ, Հայաստանի Ազգային ժողովի հինգերորդ գումարման պատգամավոր էր, Տնտեսական հարցերով մշտական հանձնախմբի անդամ:*

***- Պատմեք Վրաստանում Ձեր կյանքի մասին:***

- Ես Վրաստանում լինում եմ արդեն 30 տարի: Վրացի շատ բարեկամներ ունեմ: Պատահել է նաեւ, որ շաբաթներով ապրել եմ այստեղ: Վրաստանը շատ եմ սիրում՝ համարելով այն եղբայր պետություն: Ես ու ընտանիքս, մեզ այստեղ առավել քան հարմարավետ ենք զգում: Իսկ երեխաներս արդեն մեծ են եւ, ցավոք, կնոջս հետ հաճախ մենակ ենք մնում: Այդ է պատճառը, որ, երբ հավաքվում ենք ընտանիքով, օրը տոնի է վերածվում:

***- Վրաստանում ի՞նչն է Ձեզ ավելի դուր գալիս:***

- Այս երկրի մարդիկ: Մենք՝ հայերս, մտածելակերպով շատ նման ենք վրացիներին: Հայերն

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՄԱԺՈՂՈՎ

## ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՖՈՐՈՒՄՈՒՄ



*Հուլիսի 1-ին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն Չինաստանի պետական խորհրդի վարչապետ Լի Կեցիանի հրավերով մասնակցեց չինական Դալյան քաղաքում անկացված Համաշխարհային տնտեսական համաժողովին:*

Վրաստանի վարչապետի եւ մի քանի երկրների ղեկավարների մասնակցությամբ անցկացված համաժողովը բացեցին Չինաստանի պետական խորհրդի վարչապետ Լի Կեցիանը եւ Համաշխարհային տնտեսական համաժողովի հիմնադիր Կլաուս Շվաբը:

Մինչ այդ, պետական նստավայրում տեղի ունեցավ Մամուկա Բախտաձեի եւ Լի Կեցիանի հանդիպումը: Զրույցի գլխավոր թեմաներն էին՝ Չինաստանում վրացական ապրանքի արտահանման աճի հեռանկարները եւ Ազատ առեւտրի մասին պայմանագրի լիարժեք օգտագործման նշանակությունը: Երկու երկրների վարչապետերը մասնավորապես անդրադարձան տնտեսական առկա ներուժի լիարժեք օգտագործման հարցին, ընդգծեցին տարբեր ոլորտներում հարաբերությունների զարգացման կարեւորությունը:

Դալյանում ընթացող Համաշխարհային տնտեսական ֆորումի շրջանակներում, Վրաստանի վարչապետը հանդիպումներ ունեցավ աշխարհի խոշորագույն ընկերությունների ղեկավար անձանց հետ:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՄԱՆԴԱՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

*Այսպիսով, ի՞նչ նորամուծություն է նախատեսում իշխող կուսակցության կողմից օրենսդիր մարմնում արդեն գրանցված օրինանախագիծը, որ ներառում է աղեն 2020 թվականին խորհրդարանական ընտրությունները համամասնական ընտրակարգով ու զրոյական արգելաշեմով անցկացնելու գաղափարը:*

Ըստ նախաձեռնության, ընտրություններին մասնակից կուսակցությունները պատգամավորական մանդատները կարող են ստանալ հետեւյալ կերպ.

Մանդատների քանակը որոշելու համար կուսակցության կողմից ստացած ձայների թիվը բազմապատկվում է 150-ով (խորհրդարանի տեղերի քանակով) եւ բաժանվում մասնակցող բոլոր կուսակցությունների կողմից ստացած ձայների ընդհանուր հաշվի վրա:

Եթե բաժանված մանդատները 150-ից քիչ են, չբաժանված մանդատները հերթականությամբ բաժին կհասնեն բարձր արդյունք գրանցած կուսակցություններին:

Ընտրությունների արդյունքում մանդատ կստանան բոլոր այն կուսակցությունները, որոնք կհավաքեն նվազագույնը մեկ մանդատ ստանալու համար բավական ձայների քանակ:

Օրինակ՝ 2016 թվականին «Վրացական երազանք» կուսակցությունը ընտրություններում ստացել է 856 638 ձայն, ընտրություններում բոլոր կուսակցություննե-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

## ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱՅԻ 16-ՐԴ ՕՐ. ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԸ ՄՆՈՒՄ Է ԱՆՓՈՓՈԽ

### ՀՈՒՆԻՍԻ 20-21-Ի ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԳՆԱՀԱՏՎԵՑ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՄԱՆ ՓՈՐՁ

*Թբիլիսիում, Ռուսթավելու պողոտայում, խորհրդարանի շենքի դիմաց ահա արդեն 16-րդ օրն է. ինչ բողոքի ցույցեր են անցկացվում Վրաստանի ներքին գործերի նախարար Գիորգի Գախարիայի պաշտոնաթողության եւ ուժերի վերազանցում թույլ տված իրավապահներին պատասխանատվության ենթարկելու պահանջով:*

Հիշեցնենք, որ մայրաքաղաքի կենտրոնում բողոքի ցույցերն սկսվեցին հունիսի 20-ից, երբ խորհրդարանի նիստերի դահլիճում անցկացվող Ուղղափառության միջխորհրդարանական ասամբլեայի բացմանը Ռուսաստանի պետական դումայի պատգամավոր Սերգեյ Գավրիլովը զբաղեցրեց նիստի նախագահողի, այն է՝ Վրաստանի խորհրդարանի նախագահի բազկաթոռը: Միջադեպին հաջորդած բողոքի ցույցը օրվա վերջին վերածվեց բողոքավորների եւ իրավապահնե-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՆԴԻՊՈՒՄ

## ԿԱՅԱՑԱՎ ԵՐԿՐԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԽՈՍՆԱԿԻ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ



Հուլիսի 4-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին Աթոնելու փողոցում գտնվող նախագահի նստավայրում հանդիպում ունեցավ Վրաստանի խորհրդարանի նորընտիր նախագահ Արչիլ Թալակվաձեի հետ: Հանդիպմանը խորհրդարանի խոսնակը Սալոմե Զուրաբիշվիլուն նվիրեց դեղին վարդեր:

Երկրի նախագահի եւ խորհրդարանի խոսնակի առաջին աշխատանքային հանդիպմանը կողմերը զրուցեցին Վրաստանի խորհրդարանի եւ նախագահի աշխատակազմի միջեւ համագործակցության վերաբերյալ` կարեւորելով աշխատանքների համակարգման անհրաժեշտությունը:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

## ԱՋԱՐԻԱՅԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ` ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ

Աջարիայի Ինքնավար Հանրապետությունում 8 կուսակցություն հանդես է գալիս խորհրդարանական ընտրություններին զուգահեռ Աջարիայի Գերագույն խորհրդի ընտրությունները համամասնական ընտրակարգով անցկացնելու պահանջով: Ինչպես հայտարարեցին «Ծառայիր Վրաստանին», «Կառուցման շարժում», «Հանրապետական», «Միացյալ ազգային շարժում», «Եվրոպական Վրաստան», «Գիրչի», «Նոր Վրաստան» եւ «Քաղաքացիական շարժում» կուսակցությունների ներկայացուցիչները, վերոնշյալ պահանջով դիմելու են Աջարիայի Գերագույն խորհրդի ղեկավար Դավիթ Գաբաիձեին: Կուսակցությունների ներկայացուցիչների խոսքով, եթե իշխանությունները հաշվի չառնեն իրենց պահանջը, նրանք, օրենքի համաձայն, 20 հազար ստորագրություն կհավաքեն, ինչը բավարար է նախաձեռնություն առաջ քաշելու համար:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՄԱՆԴԱՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

(Սկիզբը` 1-ին էջում)

րը միասին ստացել էին 1 762 376 ձայն:

Նոր կարգով, 856 638 ձայնը կբազմապատկվեր 150-ով եւ կբաժանվեր 1 762 376-ի վրա ու կստացվեր 72,9: Հետեւաբար, իշխող կուսակցությունը խորհրդարանում կունենար 72 մանդատ, ներկայիս 115-ի փոխարեն:

Նախաձեռնության համաձայն, խորհրդարանում մեկ մանդատ ստանալու համար, անհրաժեշտ կլինի ընտրություններին մասնակցած ընտրողների ձայների 1/150-ը` մոտավորապես 0,67 տոկոսը:

Ավելացնենք, որ, վերոնշյալ սահմանադրական փոփոխությունը կատարելու համար, անհրաժեշտ է խորհրդարանի 150 պատգամավորից 113-ի աջակցությունը, այն դեպքում, երբ կառավարող կուսակցությունը, վերջին ընտրություններից հետո իր շարքերից դուրս եկած խորհրդարանականների արդյունքում, տնօրինում է ընդամենը 106 մանդատ: Հետեւաբար, առանց ընդդիմության աջակցության, սահմանադրական փոփոխությունը չի կարող ընդունվել:

*ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ*

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

## ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱՅԻ 16-ՐԴ ՕՐ. ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԸ ՄՆՈՒՄ Է ԱՆՓՈՓՈԽ

(Սկիզբը` 1-ին էջում)

րի միջեւ դիմակայության, որի արդյունքում, տուժեց 240 մարդ, այդ թվում` 80 իրավապահ:

Տեղի ունեցածի համար, քաղաքական պատասխանատվությունը ստանձնեց եւ պաշտոնաթող եղավ խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, պատգամավորական մանդատը վայր դրեց միջազգային այդ կազմակերպությունում Վրաստանի ներկայացուցիչ Զաքարիա Քուցնաշվիլին: Բացի այդ, կառավարող կուսակցությունը, ընդառաջելով ցուցարարների պահանջին, հանդես եկավ 2020 թվականի խորհրդարանական ընտրությունների միայն համամասնական ընտրակարգով եւ զրոյական արգելանիշով անցկացնելու նախաձեռնությամբ: Սակայն, ցուցարարները դրանով չբավարարվեցին: Նրանք բարձրացրին ներքին գործերի նախարարի պաշտոնաթողության եւ ցույցի ցրման ժամանակ ուժի վերազանցում թույլ տված իրավապահների պատասխանատվության պահանջը:

Հունիսի 20-ից Ռուսթավելու պողոտայում երեկոյան ժամը 19-ի մինչեւ ուշ գիշեր տարվող պարբերական հավաքներին մասնակցում են Վրաստանի ինչպես խորհրդարանական, այնպես էլ` ոչ խորհրդարանական քաղաքական ուժերի, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հուլիսի 4-ին Վրաստանի գլխավոր դատախազությունը հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, որտեղ նշված է, որ հուլիսի 20-ի լույս 21-ի գիշերն առանձին անձինք ընդվզման ճանապարհով փորձել են պետական իշխանությունը բռնի ուժով տապալել եւ իշխանությունը վերցնել իրենց ձեռքը: Դատախազության պնդմամբ, հաստատվել է, որ առաջին հերթին նրանք մտադիր են գրավել Վրաստանի խորհրդարանի շենքը, ինչին պետք է հետեւեին «մի շարք հանցավոր գործողություններ երկրի ողջ տարածքով մեկ»:




«Ելնելով հանրային բարձր հետաքրքրվածությունից` տեղեկացնում ենք, որ Վրաստանի գլխավոր դատախազությունն ու ներքին գործերի նախարարության կենտրոնական քրեական ոստիկանության վարչությունում հետաքննությունը ինտենսիվ շարունակվում է` 2019 թվականի հունիսի 20-21-ին խորհրդարանի մոտ տեղի ունեցած ցույցին խմբակային բռնություն կազմակերպելու, ղեկավարելու եւ մասնակցելու փաստերով»,- ասված է հայտարարության մեջ:

Ավելացնենք, որ ոստիկանությունը հունիսի 20-21-ի գիշերը, հանրահավաքի ժամանակ խմբային բռնությանը մասնակցելու համար, դատավորի որոշման համաձայն, ձերբակալել է 4 անձի:

Հետաքննության շրջանակներում, պատասխանատվության է ենթարկվել խորհրդարանի պատգամավոր Նիկանոր Մելիան: Նրանց կողմից գործած հանցանքը ենթադրում է 6-9 տարվա ազատազրկում:

*ՍԻՄՈՆ ԿԻԼԱՁԵ*



### ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ` ՀԱՆԳՈՒՑԱՅԻՆ ՊԱՇՏՈՆՆԵՐՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ

*Բավական բուռն ու տեւական քննարկումներից հետո, Եվրամիության 27 երկրների ղեկավարները համաձայնության են հասել միության շրջանակներում պատասխանատու պաշտոններում թեկնածուների ընտրության հարցում: Մասնավորապես, համաձայնություն է ձեռք բերվել Եվրամիության խորհրդի նախագահի պաշտոնում Բելգիայի վարչապետ Շառլ Միշելի, Եվրահանձնաժողովի ղեկավարի պաշտոնում Գերմանիայի պաշտպանության նախարար Ուրսուլա Վան դեր Լեյնի, արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության ոլորտում Եվրամիության գերագույն ներկայացուցչի պաշտոնում Իսպանիայի արտաքին գործերի նախարար Ժոզեֆ Բոռելֆոնտելսի, Եվրոպայի Կենտրոնական բանկի ղեկավարի պաշտոնում Արժույթի միջազգային հիմնադրամի ղեկավար Կրիստին Լագարդի թեկնածությունների առաջադրման հարցում:*

*Իսկ հուլիսի 3-ին Եվրախորհրդարանի իտալացի պատգամավոր Դավիթ Մարիա Սասոլին ընտրվեց Եվրախորհրդարանի նոր նախագահ:*

### ԱՄՆ

### ՀԱՍՏԱՏՎԵՑ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ

*ԱՄՆ Սենատը 2020 ֆինանսական տարվա պաշտպանական բյուջեի նախագիծն ընդունել է 750 միլիարդ դոլարով: 86 սենատոր պաշտպանել է օրինագիծը, 8-ը արտահայտվել են դեմ:*

*Օրինագիծը պաշտպանության ընդհանուր ծախսերը նախատեսում է 750 միլիարդ դոլարի չափով, 642,5 միլիարդ դոլարի չափով բազային բյուջե Պենտագոնի համար եւ 23,3 միլիարդ` Էներգետիկայի նախարարության ազգային անվտանգության ծրագրերի համար: Փաստաթուղթը նախատեսում է նաեւ Ուկրաինայի ռազմական օժանդակություն 300 միլիոն դոլարով, ինչը 50 միլիոնով ավելին է, քան անցյալ տարի: Բացի դրանից, այն բովանդակում է Թուրքիային F-35 կործանիչների հանձնման արգելք, եթե Անկարան գնի Ս-400 զենիթահրթիռային համալիրներ: ԱՄՆ պաշտպանական բյուջեի օրինագիծն այժմ պետք է համաձայնեցվի Ներկայացուցիչների պալատի հետ:*

ՎՐԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ

## ՀԵՏԻՆ ԹՎՈՎ ԱՐԴԱՐԱՆԱԼՈՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՓՈՐՁԸ

### ԹԲԻԼԻՍԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ Է ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՀՆԱՐԱՎՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԸ

*Հունիսի 20-ին Վրաստանի խորհրդարանում տեղի ունեցած միջադեպը եւ, որպես դրա հետեւանք, Ռուսաստանի նախագահի կողմից նախաձեռնած պատժիչ միջոցառումները (Վրաստան ռուսական ավիաչվերթերի դադարեցում, զբոսաշրջության գործակալությունների կողմից Վրաստան ուղեգրերի հանձնման սահմանափակում) լայն արձագանք առաջացրին երկրում:*

Այն ավելի սրվեց Ռուսաստանի ԱԳ փոխնախարար Գիորգի Կարասինի հայտարարությունից հետո, ըստ որի, Ռուսաստանը պատրաստ էր չեղարկել Վրաստանի հետ անձնագրային ռեժիմը, սակայն, վերջին զարգացումների պատճառով հարցը հետաձգվեց:

- Այո, իսկապես վիզայի չեղարկման հարցը քննարկվում էր: Մենք սկզբունքորեն պատրաստ էինք դրան, սակայն չստացվեց, հիմա պետք է սպասել լավ ժամանակների: Ռուսաստան ժամանած Վրաստանի քաղաքացիների թիվը տարեցտարի ավելանում է, այդ պատճառով մենք պատրաստ էինք գնալ մինչեւ վիզայի չեղարկում,- նշեց ռուս դիվանագետը:

Վրացական կողմը ռուս դիվանագետի վերոնշյալ հայտարարությունը գնահատեց որպես ռուսական կողմից երկու երկրների միջեւ ստեղծված լարված իրավիճակի պատասխանատվությունից հետին թվով խուսափելու փորձ` նշելով, որ լարվածության հիմնահարցը Վրաստանի պատմական երկու տարածքների (Աբխազիայի եւ Ցխինվալիի երկրամասի) բռնազավթումն է: Ինչպես նշեց վրաց-ռուսական հարաբերություններում Վրաստանի վարչապետի հատուկ ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեն, ռուսական կողմի նման մոտեցումը ակնհայտ չի նպաստում երկկողմ հարաբերությունների կարգավորմանը, առավել եւս նրանց կողմից այնպիսի քայլերի իրականացման պայմաններում, ինչպիսիք են բռնազավթված գոտու երկայնքով մարդկանց ձերբակալելը, Վրաստանում բուհերի ընդունելության քննությունների համար Աբխազիայում ապրող դիմորդների ճանապարհի փակումը եւ այլն:

Իսկ մինչ այդ, վրացական կողմը գնահատեց Ռուսաստանի կողմից սահմանված պատժամիջոցներից հնարավոր տնտեսական վնասները:

Հունիսի 2-ին Զբոսաշրջության ազգային վարչակազմի ղեկավար Մարիամ Քվրիվիշվիլին հայտարարեց, որ Վրաստանում հանգստացող ռուսաստանցիների թիվը 2019 թականին 1 միլիոնով կկրճատվի ՌԴ-ից թռիչքների` Ռուսաստանի իշխանությունների սահմանած ժամանակավոր արգելքի պատճառով, ինչը երկրի տնտեսությանը կհասցնի 2 միլիարդ լարիի վնաս:

- 2018 թվականին ՌԴ-ից Վրաստան է այցելել 1,4 միլիոն զբոսաշրջիկ: Նույն թվականին զբոսաշրջության ոլորտում ֆինանսական մուտքերը կազմել են 2 միլիադ լարի: 2019 թվականին մենք սպասում էինք 1,7 միլիոն զբոսաշրջիկ եւ 2,5 միլիարդ լարի: Այսպիսով, մեր կանխատեսումներով` մինչեւ տարեվերջ մենք կընդունենք շուրջ 1 միլիոնով պակաս զբոսաշրջիկ եւ կկորցնենք մինչեւ 2 միլիարդ լարի,- ասաց Քվրիվիշվիլին եւ հավելեց, որ մայիսին Վրաստան է այցելել ավելի քան 172 հազար ռուսաստանցի, այդ կերպ Ռուսաստանն այդ ամսին եղել է առաջատարը Վրաստան այցելած իր քաղաքացիների թվով:

*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԲՈՒՀ

## ՄԵԿՆԱՐԿԵՑԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

***Հուլիսի 1-ին Վրաստանի ողջ տարածքում 11 քաղաքների 23 քննական կենտրոններն իրենց դռները բացեցին միասնական ազգային քննությունների դիմորդների առջեւ:***

Ինչպես տեղեկացրին քննություններ-ի ազգային կենտրոնից, այս տարի ընդունելության քննություններին մասնակցելու համար ներկայացվել է շուրջ 41 հազար դիմում: Հուլիսի 1-ին վրաց լեզվի եւ գրականության քննությամբ մեկնարկած Միասնական ազգային քննությունները ֆիզիկայի քննությամբ կավարտվեն հուլիսի 23-ին:

Ավելացնենք, որ հուլիսի 10-ից կմեկնարկի պրակտիկոս ուսուցիչների եւ ուսուցչական գործունեություն ծավալելու ցանկություն ունեցողների քննությունները, իսկ ուսանողների դրամաշնորհային մրցույթը կանցկացվի հուլիսի 5-ին: Հուլիսի 17-24-ը կանցկացվեն մագիստրոսական քննությունները:

Ընդհանուր մագիստրոսական քննությունների համար գրանցվել է շուրջ 12 հազար, ուսանողների դրամաշնորհային մրցույթի համար՝ 4600 թեկնածու:

Ուսուցչի իրավասությունը հաստատելու համար գրանցվել է 31 հազար դիմորդ:



### ԵՐԿՐԻ 85 ՏՈԿՈՍԸ ԿԳԱԶԻՖԻԿԱՑՎԻ

*Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Նաթիա Թուրնավայի հավաստմամբ, մշակվել է գազիֆիկացման լայնածավալ ծրագիր, ըստ որի, գազիֆիկացվելու են նաեւ մինչ այդ բնական գազ չունեցող գյուղերը:*

*Նրա խոսքով, ինքն անձամբ է հետեւում մարզերում գազիֆիկացման գործընթացին եւ վերահսկում շինարարության կատարման ժամկետները:*

*Նշենք, որ Վրաստանի կառավարության կողմից հաստատված գազիֆիկացման նման ծրագրի համաձայն, 2019-2021 թվականների ընթացքում բնակչության 85 տոկոսը բնական գազի բաժանորդ կդառնա:*

### ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԿԱԶՄԵԼ Է 4,7 ՏՈԿՈՍ

*Վրաստանի վիճակագրության ազգային ծառայության նախնական գնահատմամբ, 2019 թվականի մայիսին, նախորդ տարվա համապատասխան ժամանակի համեմատ, իրական համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) աճը կազմել է 4,7 տոկոս, իսկ 2019 թվականի առաջին հինգ ամիսների միջին իրական աճը սահմանվել՝ 4,9 տոկոս:*

*Միաժամանակ, նկազման միտումը շարունակվում է շինարարության, ինչպես նաեւ վերամշակող արդյունաբերության ոլորտներում:*

### ՎԱՎԵՐԱՑՎԵԼ Է ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ԹԱՆԿԱՑՈՒՄ

*Ազգային տարադրամի՝ լարիի արժեզրկման պատրվակով, Վրաստանում գործող նավթային ընկերությունների մեծ մասը ավելացրել է վառելիքի գինը: Թեպետ, ինչպես տեղեկացնում է Նավթամթերք ներմուծողների միությունը, վերջին ժամանակահատվածում վավերացվել է վառելիքի միջազգային գների ավելացում:*

*Նոր սակագներով, Ռեգուլարի տիպի բենզինի գինը ավելացել է 5 թեթրիով: «Սոկարի» ցանցում նոր գինը 2,48 լարի է, «Վիսոլում» 2,54 լարի, «Լուկոյլիում»՝ 2,46 լարի, «Գալֆում»՝ 2.54 լարի: 3-6 թեթրիով ավելացել են նաեւ այլ տիպի բենզինի եւ դիզելի գները:*

ՎԱՐԿԱՆԻՇ

## ԱՌԱՋԱՏԱՐ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍՈՒՄ

***Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարության կողմից տարածված հաղորդագրության համաձայն, Վրաստանը Արեւելյան գործընկերության երկրների շրջանում առաջատար է ճանաչվել փոքր եւ միջին ձեռնարկատիրության քաղաքականության ինդեքսում:***

Ինչպես նշեցին նախարարությունում, տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության (OECD) աջակցությամբ անցկացված հետազոտության համաձայն, պատրաստված վարկանիշում Վրաստանն անվանվել է առաջին հորիզոնականում: Վրաստանը 12 ինդիկատորներից 9 ինդիկատորում ստացել է լավագույն գնահատական: Դրա հետ մեկտեղ, 2018 թվականի վարկանիշի համեմատ, երկրի գնահատականը եւ վարկանիշային միավորը բարելավվել է 11 ինդիկատորում:

Էկոնոմիկայի նախարարության տեղեկությամբ, նշված տեղեկությունը հայտարարվել է տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության կողմից կազմակերպված աշխատանքային հանդիպմանը:

ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԱՌԱՆՑ ՏՈՄՍԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՏՈՒԳԱՆՔԸ ՔԱՌԱՊԱՏԿՎՈՒՄ Է

***Հուլիսի 4-ից Թբիլիսիում, հասարակական տրանսպորտով, մասնավորապես՝ ավտոբուսով, առանց տոմս երթեւեկելու պատժամիջոցներն ավելացել են. այս խախտման համար քաղաքացին, հինգ լարիի փոխարեն, կտուգանվի 20 լարիով:***



Փոփոխությունը հաշվի է առնում «Վարչական իրավախախտումների օրենսգրքում» խորհրդարանի կողմից հաստատված փոփոխությունը:

Ինչ վերաբերում է տույժին, որը գործում է 30 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում, այն նվազել է եւ, 50 լարիի փոխարեն, դարձել 40 լարի:

Նորույթ կա նաեւ տոմս վերցնելու կարգում. ուղեւորը պարտավոր է, տոմս վերցնել ուղեւորությունը սկսելիս: Հակառակ դեպքում, վերահսկիչի կողմից ուղեւորության ցանկացած փուլում հնարավոր է տուգանվել:

## ՎԻԴԵՈ-ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ՝ «Police.ge» ԿԱՅՔՈՎ

***Վարորդները վիդեո-տուգանքը կկարողանան վճարել ներքին գործերի նախարարության պաշտոնական կայք-էջում:***

«Ներքին գործերի նախարարությունը քաղաքացիներին սպասարկելու մակարդակը բարելավելու նպատակով շարունակում է տեխնոլոգիական նորույթները:

Առաջին անգամ, ներքին գործերի նախարարության պաշտոնական կայք-էջում, «POLICE.GE»-ում ավելացել է նորարարական ծառայություն. վիդեո-տուգանքների առցանց վճարման գործառույթ: Այսուհետ, վարորդները վիդեո-տուգանքը կկարողանան վճարել նախարարության պաշտոնական կայք-էջում, մեկ հարթակի սկզբունքով»,- հայտարարում են ՆԳՆ-ում:

Մասնավորապես, «POLICE.GE» նախարարության պաշտոնական կայքէջում «տուգանքների բաժնին» ավելացել է տուգանքը վճարելու գործառույթը: Նշված գործառույթը քաղաքացիներին տալիս է հնարավորություն մեկ կայք-էջում դիտել վիդեո-տուգանքի կարգավիճակը եւ, դրա առկայության դեպքում, նույն կայք-էջում, ամենացածր գանձման վճարով՝ 1%, վճարել տուգանային անդորրագիրը:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԿԻՐԱՌՎԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԵՐԿՔԱՅԼ ԱՎՏՈՐԻԶԱՑԻԱՅԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Սպառողների անձնական տվյալների պաշտպանության, անվտանգության եւ տեղեկատվության գաղտնիության նպատակով, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության պաշտոնական կայք-էջում ավտորիզացված սպառողների համար, ովքեր օգտվում են հայտագրման էլեկտրոնային սպասարկումից, կկիրառվի պարտադիր երկքայլ ավտորիզացիայի սպասարկում:

2019 թվականի օգոստոսի 1-ից վերոնշյալ երկքայլ ավտորիզացիայի սպասարկման օգտագործումը պարտադիր է: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ, եթե մինչեւ 2019 թվականի օգոստոսի 1-ը վերոնշյալ երկքայլ ավտորիզացիայի սպասարկումը չակտիվացվի, սպառողների էլեկտրոնային հայտագրման սպասարկումը կդադարեցվի: Երկքայլ ավտորիզացիայի իրականացման ընթացակարգը եւ սպառողների գրանցումը ներկայացված է հատուկ տեսահրահանգներում:



## ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՆ 478 ԴԵՊՔ

Հունիսի 24-30-ը ներառյալ Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի դեպարտամենտի կողմից երկրի ողջ տարածքով անցկացված ստուգիչ միջոցառումների արդյունքում, բացահայտվել է հարկային օրենսդրության խախտման 478 դեպք:

Մասնավորապես, ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի դեպարտամենտի աշխատակիցներն ստուգել են 4364 հարկատուի: Ստուգման արդյունքում, բացահայտվել են հարկային օրենսդրության հետեւյալ խախտումները. առանց ապրանքագրերի ապրանքների փոխադրման 145 փաստ, տնտեսական գործունեության իրականացման համար հարկատուի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգի 38 դեպք, կանխիկ գումարներով առքուվաճառքի ժամանակ գանձարկղային սարքի անտեսման 295 փաստ:

## RS CAR-Ի ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻՆ

***Հուլիսի 1-29-ը, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության շարժական սերվիս-կենտրոն RS CAR-ը հարկատուներին սպասարկումներ կմատուցի երկրի մասշտաբով 37 վայրերում, այն երկրամասերում, որտեղ տեղակայված չեն եկամուտների ծառայության սերվիս-կենտրոններ:***



RS CAR միկրոավտոբուսը հագեցված է եկամուտների ծառայության սերվիս-կենտրոններում առկա տեխնիկական միջոցներին համապատասխան: Հարկատուները կարող են իրենց համար ժամանակահատվածում, առանց բնակավայրից դուրս գալու, ժամանակին ստանալ ցանկալի սպասարկում:

Եկամուտների ծառայության RS CAR շարժական սերվիս-կենտրոնը **հուլիսի 1-ին** կգործի **Թեթրիծղարոյում**, Թամար թագուհու թիվ 34-ում, վարչության հարակից տարածքում, **հուլիսի 17-ին՝ Ասպինձայում**, Թամար թագուհու փողոցում, «TBC բանկի» հարակից տարածքում, **հուլիսի 18-ին՝ Նինոծմինդայում**, Պուշկինի փողոցում, վարչության շենքի հարակից տարածքում:

Նշենք, որ բոլոր վերոնշյալ վայրերում շարժական RS CAR սերվիս-կենտրոնները կգործեն ժամը 10:00-17:00-ը:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԻ ՀԵՏ

# ՌՈՒԲԵՆ ՍԱԴՈՅԱՆ. «ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԻՆՁ ԶԳՈՒՄ ԵՄ ԱՅՆՊԵՍ, ԻՆՉՊԵՍ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ու վրացիները նույն արժեքներն ունեն: Սիրում եմ Ռուսթավելու պողոտան, Շարդեն կոչվող թաղամասը: Սիրում եմ հայկական եկեղեցիներն ու նրանց տեղադրությունը հին քաղաքում: Հաճախ եմ լինում այնտեղ, մասնակցում կիրակնօրյա պատարագների:

*- Ինչպե՞ս եք վերաբերվում վրացական խոհանոցին: Ո՞ր ուտեստներն եք առանձնացնում:*

- Վրացական ուտեստները շա՜տ համեղ են: Բայց ամեն օր վրացական խոհանոցի վայելումն ինձ համար փոքր-ինչ ծանր է: Այս խաճապուրիները, խինկալին... արդեն մի քանի ավելորդ կիլոգրամներ եմ հավաքել:

*- Հայկական խոհանոցն այդքան կալորիա չի պարունակում, որքան վրացակա՞նը:*

- Հայկականն էլ պակաս չէ, բայց մեր կանայք խոհանոցում ավելի քիչ խմոր են օգտագործում:

*- Ձեր կինը պատրաստու՞մ է վրացական ուտեստներ:*

- Եթե անկեղծ՝ ոչ: Նա հիմնականում հայկական կերակրատեսակներ է պատրաստում: Բայց երբ պատրաստվում ենք լանչի, անպայման պատվիրում ենք վրացական ուտեստներ, որից հետո փորձում՝ օգտագործել հայկականը:

*- Հայկական խոհանոցի ո՞ր ճաշատեսակն եք նախընտրում:*

- Ես գուրման չեմ: Իմ սննդակարգում թիվ առաջին, երկրորդ, երրորդ չկա: Ես շատ եմ սիրում հայկական խոհանոցը՝ սկսած տոլմայից մինչեւ խաշլամա ու աղցաններ:

*- Դե', խաշլամայի պահը կվիճարկեին կախեթցիները՝ ասելով, թե վրացական է: Բայց...*

- ...Դա հայ-վրացական հավերժ բանավեճ է. այն, թե ու՞մն է խաշլաման, խաշն ու տոլման...

*- Ինչպե՞ս եք վերաբերվում վրացական ազգային երաժշտությանը:*

- Անկասկած, վրացիները երգել գիտեն եւ դա, միանշանակ: Օրինակ, վրացական խմբերգը, արտառոց մի երեւույթ է: Վրացի տղամարդիկ իսկապես շատ լավ են երգում: Թբիլիսիում երգերն ավելի շատ եմ լսում, ավելի հաճախ, քան Հայաստանում... Կնոջս հետ շատ հրավերներ ենք ստանում եւ պարտադիր ներկա գտնվում մշակութային միջոցառումներին:

*- Ինչպե՞ս եք անցկացնում արձակուրդը, ազատ ժամանակը:*

- Այստեղ ծառայում եմ գրեթե մեկուկես տարի: Դեռ արձակուրդ չեմ գնացել, ուստի այդ հարցն ինձ մի ուղղեք: Երբ շաբաթ կամ կիրակի օրերին ժամանակս ներում է, իհարկե, այցելում ենք Մցխեթա, Սիղնաղի, Կախեթի, վայելում տեսարժանությունները:

*- Ի՞նչ կմաղթեիք Վրաստանին ու Հայաստանին այսօր:*



- «Միմինոյի» ժամանակներն անցնում են... Մինչդեռ, ցանկալի կլիներ, որ այդ երանելին շարունակվեր ապրել ե'ւ վրացիների, ե'ւ հայերի ջանքերով: Դրանք ամենաքաղցր ժամանակներն էին, համենայնդեպս՝ իմ հիշողության մեջ: Այդ կատակները, հայերի ու վրացիների հավերժ վեճերը, որոնք այնքան բարի էին ու դրական: Եվ այսօր մենք ոչ միայն պետք է խոսենք վրաց հասարակությունում՝ Վրաստանում ապրող հայերի ինտեգրման մասին: Վրաստանն իրենց երկիրն է, եւ այդպես էլ պետք է լինի: Մենք պետք է նաեւ գործադրենք մեզնով պայմանավորված ամենը, որպեսզի ավելի շատ վրացիներ այցելեն Հայաստան՝ իրենց համար բացահայտելով Հայաստանը: Եվ հատկապես՝ երիտասարդությունը: Օրինակ, տեսնում եմ 20-25 տարեկան երիտասարդի, ով երբեք Հայաստանում չի եղել: Երբ հարցնում ես պատճառը, ասում են՝ չգիտենք: Իսկ ի՞նչ է սա նշականակում: Ուրեմն ոչ ոք հետաքրքրություն չի առաջացրել: Մենք պետք է այդ ուղղությամբ աշխատենք: Վրաստանում շատ են խառը ամուսնությունները հայերի եւ վրացիների միջեւ: Եվ նման ընտանիքներում ծնված երեխաները նույնիսկ երբեք Հայաստանում չեն եղել:

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

# ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳԻ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՆՈՐ ԲԱՇԽՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ինչպես նշվեց շնորհանդեսին, 2020 թվականի խորհրդարանական ընտրությունների համար համամասնական ընտրակարգով եւ զրոյական կամ, ինչպես ասում են մասնագետները, բնական արգելքով անցկացվելիք գործընթացի կիրարկումը սկսվում է հուլիսի 1-ից: Խորհրդարանի բյուրոն օրենսդիր մարմնի Արարողակարգային հարցերի եւ սահմանադրական օրենքի նախագծի կանոնների կոմիտեին ներկայացրեց օրինանախագիծն ու այն վավերացնող ստորագրությունները: Իր հերթին, կոմիտեն մեկ շաբաթվա ընթացքում խորհրդարանի բյուրոյին պետք է ներկայացնի ստուգման արդյունքները, որից հետո խորհրդարանում կդրվի սահմանադրական օրենքի նախագծի հրապարակման եւ համաժողովրդական քննարկման համար կազմակերպչական հանձնաժողովի ստեղծման հարցը:

Նշենք, որ իշխող կուսակցությունը վերոնշյալ գործընթացներն իրականացրեց առանց քաղաքական մյուս ուժերի հետ խորհրդատվության, թեպետ մեծամասնական ընտրակարգի վերացման եւ միայն համամասնական ընտրակարգի ամրագրման մասին խոսակցությունները սկսվել էին դեռեւս 2012 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո, սակայն, կառավարող թիմի առաջարկությամբ ծրագրված էր սահմանադրական նորամուծությունը ներդնել 2024 թվականի խորհրդարանական ընտրություններին: Թեպետ ինչպես նշեց կուսակցության գլխավոր քարտուղար Կախա Կալաձեն, վերջին ժամանակներում երկրում ծավալված գործընթացները ցույց տվեցին, որ քաղաքական համակարգի զարգացման գործում հարկ է իրականացնել արմատական փոփոխություններ:

### ԿԱԽԱ ԿԱԼԱՁԵ. «ԵՐԿՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՇԱՐՈՒՆԱԿՎԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԼԱՅՆ ԲԱՇԽՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ»



- 2017-2018 թվականներին սահմանադրական բարեփոխումների հիման վրա ձեռնարկվեց սկզբունքային քայլ եւ ներդրվեց համամասնական ընտրակարգը, որը ուժի մեջ էր մտնելու 2024 թվականից, եւ այդ ընտրությունները անցկացվելու էին միայն այդ ընտրակարգով: Վերոնշյալ փոփոխությունը սահմանադրական բարեփոխման գլխավոր ձեռքբերումն էր, բարեփոխում, որն ապահովելու էր երկրում անշրջելի ժողովրդավարական զարգացումները: Սակայն, վերջին իրադարձությունները ցույց տվեցին քաղաքական համակարգի զարգացման գործում արմատական փոփոխությունների կատարման անհրաժեշտությունը: Երկրի կառավարումը պետք է շարունակվի քաղաքական, հասարակական տարբեր սուբյեկտների քաղաքական լայն խորհրդատվության հիման եւ համապատասխան պատասխանատվության լայն բաշխման վրա, ինչը նշանակալից է մեր թիմի համար,- հայտարարեց Կախա Կալաձեն:

### ԱՐՉԻԼ ԹԱԼԱԿՎԱՁԵ. «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՎԵԼՈՒ ԵՆ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ»



Համամասնական ընտրակարգի եւ զրոյական արգելքի սահմանադրական ամրագրման շնորհանդեսին իր խոսքում Վրաստանի խորհրդարանի նոր նախագահ Արչիլ Թալակվաձեն նշեց, որ առանց ընդդիմության ակտիվ ներգրավման, սահմանադրական փոփոխությունների կատարումը անիրատեսական է:

- 2020 թվականին համամասնական ընտրությունների անցկացումը բնական կամ, ինչպես ասում են, զրոյական շեմով «Վրացական երազանքի» կողմից ճիշտ եւ ժողովրդավարական քայլ էր, դրանով կատարում ենք հանրության պահանջը,- ասաց Արչիլ Թալակվաձեն եւ ընդգծեց այդ գործընթացում ընդդիմության մասնակցության կարեւորությունը:

- Ողջունում եմ ընդդիմադիր կուսակցությունների մասնակցությունն այս գործընթացում, հանրությանը ուզում եմ տեղեկացնել, որ ընդդիմադիր ուժերի աջակցությունն անհրաժեշտ կլինի որոշում կայացնելիս, սահմանադրությունում փոփոխություններ մտցնելու հարցում,- նշեց նա եւ հավելեց, որ իշխող կուսակցությունը չի կարող միայնակ իրականացնել սահմանադրական փոփոխությունները:

### ՆԻՆՈ ԲՈՒՐՋԱՆԱՁԵ. «ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳԸ ԿԱՐՏԱՑՈՒԼԻ ԻՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ»



«Համասնական ընտրակարգ-2020» շնորհանդեսին մասնակից Ժողովրդավարական շարժման նախագահ, Վրաստանի խորհրդարանի նախկին նախագահ Նինո Բուրջանաձեն գտնում է, որ համամասնական ընտրակարգը որոշակի բազմերանգություն կմտցնի խորհրդարանում, թեպետ այն կարտացոլի քաղաքական իրատեսական պատկերը:

- Այսինքն, ոչ մի քաղաքական ուժ, այդ թվում նաեւ իշխանությունը չի կարողանա ստանալ ավելի շատ մանդատներ, քան այն, որը կշնորհվի բնակչության կողմից: Դա որոշակի բազմերանգություն կմտցնի խորհրդարան, թեպետ գտնում եմ, որ այսօր երկրում իրավիճակն այնպիսին է, որ գերադասելի է բանավեճերը վարել խորհրդարանում, քան՝ փողոցում,- հայտարարեց Նինո Բուրջանաձեն:

### ԱՎԹԱՆԴԻԼ ԴԵՄԵՏՐԱՃՎԻԼԻ. «ԱՅՍ ԱՄԵՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ, ԿՈՒՆԵՆԱՆՔ ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ»



Կոնստիտուցիոնալիստ, Վրաստանի սահմանադրական դատարանի նախկին բազմամյա նախագահ Ավթանդիլ Դեմետրաշվիլին գտնում է, որ 2020 թվականի ընտրությունների համամասնական ընտրակարգով անցկացման նախաձեռնությունը բանական որոշում է: Իսկ ինչ վերաբերում է զրոյական արգելքին, ապա դա ունի ինչպես դրական, այնպես էլ՝ բացասական կողմեր:

- Ըստ իս, զրոյական արգելքը նշանակում է, որ քաղաքական բոլոր ուժերն ունեն մանդատներ ստանալու որոշակի հնարավորություն, այսինքն, արդյունքում կունենանք ներկայացուցչական բազմակարծիք խորհրդարան, ինչը կհամապատասխանի ներկայիս ընդդիմության պահանջներին: Բնականաբար, ընտրահամակարգի նկատմամբ զրոյական հանդուրժողականությունը դրական երեւույթ է, սակայն մյուս կողմից որքանո՞վ կարելի է երաշխավորել նման պայմաններում ձեւավորված խորհրդարանի գործունեությունը, կամ որքանով իրատեսական կլինի նման բազմակարծության պայմաններում կառավարության ձեւավորումը:

### ԴԱՎԻԹ ՈՒՍՈՒՓԱՃՎԻԼԻ. «ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ՀԻՄՆԵԼ ՉԱՓԻՑ ԱՎԵԼԻ ՄԱՍՆԱՏՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՊԵԿՏՐ»



Վրաստանի խորհրդարանի նախկին նախագահ, 2012 թվականի «Վրացական երազանք» ընտրադաշինքի կազմում «Հանրապետական» կուսակցությունից Դավիթ Ուսուփաշվիլին, մեկնաբանելով 2020 թվականի խորհրդարանական ընտրությունները զրոյական արգելքով համամասնական համակարգով անցկացնելու մասին նախաձեռնությունը, նշեց, որ, վերացնելով արգելքը, կառավարող թիմը փորձում է հիմնել մասնատված քաղաքական սպեկտր:

- Մենք պարտավոր ենք մինչեւ ավարտին համամասնական ընտրակարգով ընտրությունների անցկացման Իվանիշվիլու պատրաստակամությունը, թեպետ առանց որեւէ նախապայմանի,- հայտարարեց Դավիթ Ուսուփաշվիլին եւ հավելեց, որ նախաձեռնությունն ունի նաեւ դրական կողմ, քանի որ «կկայանա քաղաքական սպեկտրի հստակ ընտրություն եւ մարդիկ բացահայտ կտեսնեն, թե ո՞վ է մտահոգ երկրի համար, եւ ո՞վ է զբաղված միայն իր հարցերի լուծմամբ»:

*Պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ*